

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«\_\_\_» սեպտեմբերի 2012թ.

N\_\_\_ -Ա

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշումը, հաշվի առնելով <<Լուսավան Դիվելփմընթ>> ՓԲԸ-ի համաձայնությունը.

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ <<Լուսավան Դիվելփմընթ>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2699386. վկայական) Այասի փողոցի հ.110/1 հասցեում գտնվող 64745.79քմ հողամասից 4953.4քմ և սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2776044 վկայական) Այասի փողոցի հ.110/3 հասցեում գտնվող 22188,72քմ մակերեսով հողամասից 5072.8քմ մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող կից՝ համապատասխանաբար 4953.4քմ և 5072.8քմ մակերեսներով հողամասերի (ծածկագիր՝ 01-007-282-001, տող՝ 25187) հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### <<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է <<Լուսավան Դիվելփմընթ>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2699386 վկայական) Այասի փողոցի հ.110/1 հասցեում գտնվող 64745.79քմ հողամասից 4953.4քմ և սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2776044 վկայական) Այասի փողոցի հ.110/3 հասցեում գտնվող 22188,72քմ մակերեսով հողամասից 5072.8քմ մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամասերի հետ փոխանակելու համար:

ՀՀ կառավարության 07.03.2012թ. հ.271-Ա, Երևանի քաղաքապետի 04.04.2012թ. Հ.3026-Ա և 02.05.2012թ. հ.3636-Ա որոշումներով Ծովակալ Բսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև նախատեսել և իրականացվում է ավտոմայրուղու կառուցման աշխատանքներ:

Կառուցվող ավտոմայրուղու կառուցման համար նախատեսված հողատարածքի սահմաններում են ներառվել սեփականության իրավունքով <<Լուսավան Դիվելփմընթ>> ՓԲԸ-ին պատկանող 4953.4քմ և 5072,8քմ մակերեսներով հողամասերը:

Ստեղծված իրավիճակում, խնդրի կարգավորման նպատակով, առաջարկվել է <<Լուսավան Դիվելփմընթ>> ՓԲԸ-ին, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2699386 վկայական) Այասի փողոցի հ.110/1 հասցեում գտնվող 64745.79քմ հողամասից 4953.4քմ և սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2010թ. հ.2776044 վկայական) Այասի փողոցի հ.110/3 հասցեում գտնվող 22188,72քմ մակերեսով հողամասից 5072.8քմ մակերեսով հողամասերը փոխանակելու Երևան համայնքի սեփականություն հանդիսացող կից՝ համապատասխանաբար 4953.4քմ և 5072.8քմ մակերեսներով համարժեք հողամասերի (ծածկագիր՝ 01-007-282-001, տող՝ 25187) հետ:

Քննարկվող հողամասերն ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 6-րդ գոտում, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Ելնելով վերոգրյալից, նախապատրաստվել է «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշումը:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ  
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ  
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**